

# ԲԱՆԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

## Philology – Филология

ԽԱԶԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան

ԳՐԻԳՈՐ ԵՐԵՎԱՆՑԻ ԺԷ. ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ  
ՄԻ ԱՐԴՅՈՒՆԱԾԱՏ ԳՐԻՉ.  
Ա. ԳՐԻՉԸ ԵՎ ՆՐԱ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱԳՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ Երևան, էջմիածին, ձեռագիր, հիշատակարան, գրչության կենտրոն, ստացող:

### Մուսոf

Երևանի և նրա մերձակայքի գրչօջախների ուսումնասիրությունը<sup>1</sup> Երևան հանեց ԺԷ. դարի երկրորդ կեսին Երևանում, Նորագավթում և Մայր Աթոռ Սուրբ էջմիածնում ձեռագրաստեղծման բեղուն գործունեություն ծավալած մի գրչի, որն իր շուրջ երեք տասնյակ ձեռագրերի մեծ ու փոքր հիշատակարաններում ստորագրել է որպես Գրիգոր Երևանցի: Նկատենք, որ Երևանցի տեղանվանացուց մականվան շնորհիվ վերջինիս հիմնականում հնարավոր է զատորոշել նույն ժամանակահատվածում գրչությամբ զբաղված և Գրիգոր անունը կրած այլ գրիչներից, որն ինչ-որ առումով նպաստում է նաև գրչի ձեռագրական վաստակի ճշգրտմանը: Մակայն ինչպես մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, միշտ չէ, որ գրչանվանն ուղեկցել է նշյալ մականունը, իսկ որոշ դեպքերում հնարավոր չի եղել նաև խոսափել շփոթիներից՝ նույնացնելով նրան համանուն այլ գրիչների հետ:

Ներկա ուսումնասիրությունը նվիրված է Գրիգոր Երևանցու ձեռագրաստեղծ գործունեության և նրա ձեռագրական ժառանգության քննությանը:

Հոդվածի Ա. մասում քննության ենք առել գրչի ընտանիքին վերաբերող տեղեկությունները, ձեռագրակերտմանն առնչվող մանրամասներն ու ստացող-

<sup>1</sup> Հետազոտությունն իրականացվում է «Երևանի գրչության կենտրոնները և ձեռագրական ժառանգությունը» թեմայի շրջանակներում՝ ՀՀ Գիտության կամխարական դրամագիտական համույնք (ծածկագիր՝ 19YR-6A035):

ներին: Ուսումնասիրության ավարտին տրվում են նաև գրչի ձեռագրական ժառանգությունն ու նրա գործունեության ժամանակագրությունն ամփոփող երկու աղյուսակներ:

Հոդվածի Բ. մասում, որ տեղ է գտնելու «ԲՄ»-ի հաջորդ համարում, քննվում են մի քանի ձեռագրերում գրչի թողած ուշագրավ հիշատակարանները, որոնք աշքի են ընկնում ոչ միայն պատմական կարևոր իրադարձությունների փաստագրումներով, այլև լեզվական ուրույն դրսերումներով:

### 1. Տեղեկովայուններ Գրիգոր Երևանցու և նրա ընտանիքի վերաբերյալ

Գրչի կենացրությանն ու գործունեությանը վերաբերող մեր տեղեկությունները խիստ սահմանափակ են, և սա այն դեպքում, երբ նրանից մեզ հայտնի ձեռագրերի թիվը հասնում է մոտ երեք տասնյակի: Թվում է ձեռագրական այս պատկառելի ժառանգությունը և առաջին հերթին ձեռագրերում գրված հիշատակարանները կարող էին առավել շափով լուս սփռել գրչի կյանքի և գործունեության վրա, սակայն ուսումնասիրությունն այլ պատկեր երևան հանեց: Գրիգոր Երևանցին ժամանակակից է եղել այս կարգի տեղեկություններ հաղորդելու հարցում. մյուս կողմից՝ ինչպես նկատել է արդեն Երևանի պատմության քաջագիտական թագելու Հակոբյանը, Երևանյան կամ Երևանամերձ տարբեր գրչօջախներում ձեռագրեր ընդօրինակած գրիշներն իրենց հիշատակարաններում սակավախոս են եղել<sup>2</sup>: Գրիգոր Երևանցին իր ընդօրինակած ձեռագրերի մի զգալի մասում բավարարվել է համառոտ, մինչև անգամ մեկ-երկու նախադասությունից բաղկացած հիշատակարաններով, որոնցում թողել է միայն իր անունը տեղանվանացուց մականվամբ, երբեմն էլ նաև գրչության թվականը: Օրինակ՝ Մաշտոցյան Մատենադարանի (այսուհետ՝ ՄՄ) Հմբ 1864 ժողովածուի (բաղկացած է երկու տարբեր ձեռագրերից) Ա. ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Գծեցաւ ձեռամբ յոգնամեղ Գրիգորի Երեւանցւոյ ի թուիս ՌՃԻԵ, (1676)»<sup>3</sup>: Գրեթե նույնն է նաև ՄՄ Հմբ 3032 ձեռագրի հիշատակարանը. «Գծեցաւ ձեռամբ յոգնամեղ Գրիգորի Երեւանցւոյ»<sup>4</sup>: Ահա ևս մեկը. «Գրեցաւ Աշխարհացոյցս ի

<sup>2</sup> Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1500-1800 թթ.), Երևան, 1971, էջ 387:

<sup>3</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Զ., ձեռագիր 1801-2100, խմբագրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեամի, Երևան, 2012, էջ 235:

<sup>4</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ժ., ձեռագիր 3000-3400, խմբագրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեամի, Երևան, 2019, էջ 148:

թուին ՌՃՇՀ. (1678) ձեռամբ յոզնամեղ Գրիգորի Երևանցւոյ»<sup>5</sup>: Համանման հիշատակարաններ կան նաև ՄՄ Հմր 450Փ, Հմր 10273, Երուաղեմի Սրբոց Հակոբյանց ձեռագրական հավաքածուի (այսուհետ Եղմ.) Հմր 22687, Հմր 22928 և այլ ձեռագրերում:

Որևէ հիշատակարանում գրիշը չի նշել իր ծննդավայրը, և միայն Երևանցի տեղանվանացուց մականունից կարելի է ենթադրել, որ Գրիգորը ծնունդով Երևանից է եղել: Այս Երևույթը եզակի չէ հայ գրչարվեստում. գրիչներն իրենց ծագումն ընդգծելու համար հաճախ են բավարարվել տեղանվանացուց մականուններով՝ Թորոս Տարոնացի, Միքայել Թոփամթեցի, Մեսրոպ Խիզանցի և այլն: Բավական է հիշել 887 թ. հնագույն թվակիր Ավետարանը («Լազարյան» Ավետարան, ՄՄ Հմր 6200), որի գրիշը ներկայանում է որպես Մահակ Վանանդացի, իսկ հորը հիշատակում Վարդ Վանանդացի ձևով<sup>6</sup>:

Գրիգոր Երևանցու ընտանիքին վերաբերող որոշ մանրամասներ հնարավոր է լինում պարզել ընդամենը մի քանի ձեռագրի հիշատակարաններում թողնված սակավ տեղեկությունների համադրումով: Այս տեսանկյունից ուշագրավ է 1687-1689 թթ. ընդօրինակված ՄՄ Հմր 1512 Հայսմավուրքի ընդարձակ և արժեքավոր հիշատակարանը, որում, ի թիվս բազմաթիվ դեպքերի ու դեմքերի, Գրիգոր Երևանցին նշում է նաև իր ընտանիքի անդամներին: Մեջբերում ենք եզակի այդ հիշատակարանից մի հատված. «Այլ արդ, ես՝ ամենաթափուրս ի բարեաց եւ լրացեալս մեղօք, յերես անկեալ աղաչեմ զամենեսեան, զի եւ զիս յիշման արժանի առնիցէք՝ զգծագրօղս, զբազմամեղս՝ զ Գրիգոր, եւ զծնօղսն իմ՝ զ Մուրատն եւ գիւանբէկին, եւ զհօրէպապն իմ՝ զ Գրիգորն, եւ զհանիկն իմ՝ զ Բանաւշն, եւ զմօրէպապն իմ՝ զ Աստուածապովն, եւ զեղբայր նորին՝ զ Հայրապետն, որ է հայր տէր Աստուածատուրին, եւ պապ Խանաղին, այլ եւ զեղբարսն

<sup>5</sup> Յ. Թօփեան, Յուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ-Ս. Ղազար, 1962, էջ 77:

<sup>6</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ., կազմեցին՝ Օ. Եղանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաքեան, Ա. Քեօշկերեան, խմբագրութեամբ՝ Ա. Մնացականեանի, Օ. Եղանեանի, Ա. Զէյթունեանի, ցանկերը՝ Վ. Դերիկեանի, Երևան, 2004, էջ 739:

<sup>7</sup> Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. է., կազմեց Ն. արքեպս. Պողարեան, Երուասդիմ, 1974, էջ 363:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 393:

<sup>9</sup> Գր. Խալաբյանցը գրի և նրա հոր տեղանվանացույց մականուններից ենթադրել է, որ գրչության վայր կարող է լինել հենց Վանանդը, ըստ որում հարցականով՝ «Կարո՞ւց»: Տե՛ս Աւետարան ըստ թարգմանութեան նախնեաց մերոց, գրեալ Յլօք թ. հայոց եւ յամի Տեառն 887, լուսաթիվ հրատարակութիւն գրչագրի Լազարեան եւմարանի արեւելեան լեզուաց արդեամբ պատույ հոգաբարձուի եւմարանիս իշխան Սիմէօնի Աբամէլիմ-Լազարեան, Մոսկովա, 1899, Յառաջաբան, էջ Բ.: Տե՛ս նաև Ա. Մաքենոյան, «Լազարյան եւմարանի հնագույն ձեռագիրը», ՊԲՀ Նո 1, 1973, էջ 128-130: Խոյնի՝ Հայերէն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբանբարյուր, Երևան, 1998, էջ 20:

իմ՝ զ Գրիգորն, զԿարապետն եւ զՄարգարէն՝ զհանգուցեալսն ի Քրիստոս, եւ զքորքն իմ՝ զՀոփիսիմէն, զՄարինոսն, զԵղիսաբէթն եւ զՎառվառն՝ զհանգուցեալսն ի Տէր, եւ զկենակիցն իմ՝ զԱնթառամն, եւ զդստերսն իմ նորաբողբոշ՝ զԽանբէկին եւ զՀոփիսիմէն, որ ի սկսանել գրոցս զմին ծնաւ եւ յաւարտեալն՝ զմիւնաւ<sup>10</sup>:

Հիշատակարանից պարզ է դառնում, որ Գրիգոր Երևանցին ծնվել է բազմանդամ ընտանիքում. ծնողները՝ Մուրատն ու Խանբեկին, ունեցել են չորս որդի և նույնքան դուստր: Դժբախտաբար, ինչպես տեղեկացնում է Գրիշը նույն հիշատակարանում, քույրերն ու եղբայրները վաղաժամ հեռացել են կյանքից: Մյուս կողմից՝ խորհրդանշական է այն, որ Հայոմավուրքի ընդօրինակման ժամանակահատվածում Գրիգոր Երևանցին ունեցել է երկու դուստր. առաջնեկը մոր անունով՝ Խանբեկի, իսկ մյուսը՝ թերևս հանգուցյալ քրոջ անունով՝ Հոփիսիմէ: Ավելի ուշ՝ 1698 թ. գրված ընդամենը մեկ հիշատակարանից էլ (Եղմ. Հմ՛ 1918) պարզ է դառնում, որ Գրիշը հետագայում նաև որդիներ է ունեցել, որոնց անունները նրանից մեզ հայտնի այլ գրչագրերում չեն նշվում. «յիշեսցիք ի մաքրափայլ աղօթս ձեր զառածեալս մեղօք զյունամեղ Գրիգոր Գրիշ Երեւանցի, եւ զծնօղսն իմ՝ զՄուրատն եւ զԽանբէկին, եւ զեղբարսն իմ եւ զքորսն՝ զհանգուցեալսն ի Քրիստոս: Նաև զընտանիս իմ՝ զորդիսն իմ եւ զդստերսն, որպէս զի ի միասին բոլորապար պարուք, յիշօղքդ յիշեցելովքս հանդերձ, գտցուք թողութիւն մեղաց»<sup>11</sup>:

Հայտնի է, որ ընտանիքի անդամների, մերձավոր ազգականների անունների հիշատակումները մի կողմից նպաստում են ընտանիքի կազմության, կենցաղի կազմակերպմանն առնչվող զանազան հարցերի ուսումնահրությանը, մյուս կողմից կարող են վճռորոշ դեր խաղալ գրիշ նույնականացման և համանուն այլ գրիշներից տարբերակելու համար: Այս առումով բացառություն չէ նաև Գրիգոր Երևանցին: ՄՄ Հմ՛ 3502 ժողովածուն, որն ընդօրինակվել է 1658-1663 թթ. ընթացքում, ունի հետևյալ հիշատակարանը. «Ընդ նմին եւ ես՝ յետինս յամենեսեան եւ քան ըզբնաւս յանցաւորս, եւ անթիւ մեղօք ծանրաբեռնեալս, եւ արժանիս բազում մահուց եւ ոչ մի կենաց, խաւարամածս ոգւով Գրիգոր Գրիշ, որ չեմ յիշելոյ լարժան՝ հավելումք մերն է ի. Հ.], աղաչեմ յիշել յաղօթս առաջի Քրիստոսի զիս եւ զծնօղսն իմ՝ զՄուրատն եւ զԽանբէկին, եւ զեղբարն իմ՝ զԿարապետն եւ

<sup>10</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե., կազմեցին՝ Օ. Եղանեան, խմբագրութեամբ՝ Յ. Քեօսէեան, Ա. Ղազարոսեան, տ. Շահէ քհյ Հայրապետեանի, ցանկերը կազմեց՝ Վ. Խերիկեան, Երևան, 2009, էջ 160:

<sup>11</sup> Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Զ., կազմեց Ն. Եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1972, էջ 368:

զՄարգարէն, որ փոխեցան առ Քրիստոս. որպէս զի աղօթիւք ձեր գտցուք ողորմութիւն ի Քրիստոսէ, եւ Տէր տացէ զտըրիտուր ձեզ բազումս ամէնէն»: Ծնողների և հանգուցյալ Եղբայրների անունների հիշատակման շնորհիվ դժվար չէ կոահել, որ իր անունը նշող Գրիգոր գրիշը նույն Գրիգոր Երևանցին է: Ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ այս դեպքում բացակայում է նրա՝ Երևանցի տարբերակիչ մականունը, առանց որի խիստ դժվար է բազմաթիվ Գրիգոր գրիշների մեջ հստակ կողմնորոշվելը: Հստ որում՝ նկատնք, որ Երևանցի մականունը գրշից մեզ հայտնի ձեռագրերի հիշատակարաններում առաջին անգամ ի հայտ է գալիս 1659 թ. «Գրեցաւ ի թուականիս Հայոց հազար հարիւր եւ ութ (1659), ձեռամբ անարժան Գրիգորի Երեւանցոյ»<sup>12</sup>:

Ավելորդ շենք համարում Գրիգոր Երևանցու ընտանիքի և անձամբ գրշի կյանքին ու գործունեությանը վերաբերող ևս մի մանրամասնի վրա ուշադրություն հրավիրել, մանավանդ որ դրա հստակեցումն իր հերթին նպաստում է տարաբնույթ շփոթներից խուափելու համար: Այսպես, Գրիգոր Երևանցու հիշատակարաններից և ոչ մեկում նրա անվանը կից չկա հոգևորական որևէ աստիճան նշող բառ (սարկավագ, քահանա, Երեց, տեր և այլն), ավելին, ինչպես երեւում է ընտանիքի անդամների անունները պարունակող վերոբերյալ հիշատակարաններից, գրշի անմիջական ընտանիքում ևս որևէ հոգևորական չի հիշատակվում: Ասել է թե, Գրիգոր Երևանցին ծնվել է Երևանում՝ աշխարհականների ընտանիքում, և չի բռնել հոգևորական դառնալու ուղին, թեև ինչպես հաջորդիվ կտեսնենք, առավել շափով մատյաններ նաև ընդօրինակել է հենց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո՝ մինչև անգամ կաթողիկոսական պատվերներով: Զուգահեռ օրինակը ևս խոսում է մեր այս դիտարկման օգտին. Գրիգոր Երևանցուն ժամանակակից և Երևանյան գրչօջախի մեկ այլ բազմարդյուն գրիչ՝ Ավետիսը, որից մեզ հայտնի է 10 ձեռագիր, իր անվանը կից գրեթե միշտ նշել է Երեց բառը, իսկ որոշ դեպքերում՝ նաև Երևանցի տեղանվանացույց մականունը. «Աւարտեցաւ սուրբ գիրքս ի քաղաքն յԵրեւան, ձեռամբ տրուպ Աւետիս իրիցու յԵրեւանցույց, թվին ՌՃՂԶ. (1687), ի մուտն յուլիս ամսոյ»<sup>13</sup> կամ «Գրեցաւ ի թուին ՌՃԽԴ. (1695), ձեռամբ յոգնամեղ Աւետիս իրիցի Երեւանցույց»<sup>14</sup>:

<sup>12</sup> R. H. Kévorkian, A. Ter-Stépanian, avec le concours de Bernard Outtier et de Guévorg Ter-Vardanian, *Manuscrits arméniens de la Bibliothèque nationale de France, Catalogue*, Bibliothèque nationale de France, Paris, 1998 p. 947.

<sup>13</sup> Ա. Հարությունյան, «Ավետիսի Երեց Երևանցի գրչի ձեռագրական ժառանգությունը», ԲՄ № 27, 2019, էջ 330:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 336:

Ամփոփելով՝ Գրիգոր Երևանցու կյանքին և ընտանիքին առնչվող մանրամասների պարզաբանումները և համադրելով՝ դրանք՝ ստանում ենք հետևյալ պատկերը.

Գրիգոր Երևանցու՝  
հայրական պապը՝ Գրիգոր, կինը՝ Բանաւշ (Բանաւշէ)  
հայրը՝ Մուրատ, մայրը՝ Խանբեկի  
Եղբայրները՝ Կարապետ (†), Մարգարե (†), Գրիգոր (†)<sup>15</sup>,  
քույրերը՝ Հոփիսիմե (†), Մարինոս (†), Եղիսաբեթ (†), Վանվան (†)  
կինը՝ Անթառամ  
դուստրերը՝ Խանբեկի, Հոփիսիմե (ծնվել են համապատասխանաբար  
1687 և 1689 թթ.)

որդիներ՝ (ծնվել են 1690-ի և 1698 թթ. միջև)՝<sup>16</sup>:

Այս տեղեկություններն էապես օգնում են մեզ Գրիգոր գրչի ձեռագրական ժառանգության ճշտմանը: Ընդումին՝ հարկ ենք համարում անդրադառնալ մի շփոթմունքի, որը վերաբերում է Երևանում միևնույն ժամանակահատվածում ապրած և գրչությամբ զբաղված նույնանուն մեկ այլ գրչի հետ Գրիգոր Երևանցու նույնացմանը: Թ. Հակոբյանը Գրիգոր Երևանցի անունով է կոչում Երևանում գրչությամբ աշքի ընկած Գրիգոր քահանային՝ գրելով. «Ավետիք Երեցի ժամանակակիցն էր գրիչ Գրիգոր Երևանցին, որը քահանա էր և իր գրչական վաստակով միայն Ավետիս Երեցին էր զիջում»<sup>17</sup>: Եվ իսկապես, ժե. դարի երկրորդ կեսին Գրիգոր քահանան գրչությամբ է զբաղվել Երևանում, սակայն նրանից մեզ հայտնի երկու գրչագրերում՝ ՄՄ Հմ 338 և 7099, Գրիգոր քահանան չի ստորագրել Երևանցի մականվամբ, հավանաբար հենց այն պատճառով, որ այդպես էր իրեն կոչում ժամանակի մեկ այլ գրիչ: Մյուս կողմից, ինչպես տեսանք, Գրիգոր Երևանցի գրիչը հոգևորական որևէ աստիճան չի ունեցել, և Գրիգոր Երևանցին ու Գրիգոր քահանան նույն ժամանակահատվածում Երևանում գրչությամբ զբաղված երկու տարբեր գրիչներ են: Նրանց շփոթել է նաև Ն. արք. Պողարյանը՝ հայ գրիչներին նվիրված իր արժեքավոր ուսումնասիրության մեջ<sup>18</sup>: Նկատենք, որ Մատենադարանի Յուցակ ձեռագրաց-ում նույնպես Հմ 7099-ի գրիչ է նշված

<sup>15</sup> Գրիգորը պես է որ մահացած լինի Կարապետից և Մարգարեից հետո, քանի որ վերոնշյալ ՄՄ Հմ 3502 ձեռագրի հիշատակարանում արձանագրված է միայն Կարապետի և Մարգարեի մահվան փաստը:

<sup>16</sup> Յավոն, ձեռագրերի հիշատակարաններից հնարավոր շեղալ պարզել, թե քանի որդի է ունեցել Գրիգոր Երևանցին և արդյոք նրանցից որևէ մեկը շարունակել է հոր արհեստը և գրչությամբ զբաղվել:

<sup>17</sup> Թ. Խ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 396:

<sup>18</sup> Ն. արք. Պողարյան, Հայ գրիչներ (Թ.-Ժ. դար), Երևանադիմ, էջ 378-379:

Գրիգոր Երևանցին<sup>19</sup>, մինչդեռ նույն ձեռագրի հիշատակարանում գրիշը ներկայանում է այսպես. «Նուաստ ծառայ Քրիստոսի Գրիգոր Եւթ անուամբ քահանայ ի քաղաքին Երեւանայ»: Ավելին, նույն հիշատակարանն ավանդում է նաև գրիշի ծնողների և ընտանիքի մյուս անդամների անունները, որոնք, ի՞արեկե, տարբեր են Գրիգոր Երևանցու հարազատների անուններից: Ահա մեզ հետաքրքրով վկայությունը. «Իշխատակ ինձ եւ ծնօղացն իմոց՝ տէր Յովաննիսի ընտրեալ քահանայի՝ հանգուցելոյն առ Քրիստոս, եւ մօրն իմոյ՝ Մարիամին, եւ եղբարցն իմոց՝ Գասպարին եւ Անդրիասին, եւ կողակցին եւ որդւոյն իմոյ՝ տարաժամ մահուամբ փոխեցելոցն առ Քրիստոս՝ Մարգարտին եւ Մկրտումին, զոր եւ խնդրեմ յիշել առ Տէր»<sup>20</sup>:

Այս շփոթմունքն է թերևս պատճառ դարձել, որ Գրիգոր Երևանցու ընդօրինակած ՄՄ Հմր 435 ժամագիրքը ևս վերագրվել է Գրիգոր քահանային<sup>21</sup>:

Եվս մի շփոթմունք կապված է ՄՄ Հմր 3502 ձեռագրի գրիշ հետ: Մատյանը ժողովածու է, այն պարունակում է Մովսես Խորենացու, Ստեփանոս Տարոնացի Ասողիկի, Արիստակես Լաստիվերցու պատմագրական երկերը, ինչպես նաև Խորենացուն վերագրվող «Աշխարհացուց»-ը: Ձեռագիրը հայտնի է իր բովանդակությամբ և գործածվել է նշալ մատենագիրների երկերի բնագրերի կազմության ընթացքում<sup>22</sup>: Թ. Հակոբյանը սույն մատյանի գրիշ է նշում Մատաթիա վարդապետին<sup>23</sup>, իսկ ձեռագրի համառոտ նկարագրության մեջ Գրիգոր Երևանցու անվանը կից, իբրև այլ գրիշ, նշված է նաև ոմն Աստվածառուրի անուն: Նույն տեղում, որպես ստացող, նշված է Մատաթիայ վարդապետը<sup>24</sup>: Արդ, այս շփոթը պարզվում է ձեռագիրը տեղում ստուգելուց հետո: Միանգամայն պարզ է, որ

<sup>19</sup> Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենագարանի, կազմ. Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, ցանկերը և համեմատ. տախտակներ՝ Օ. Եգանյանի, խմբ. Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, հ. Բ., Երևան, 1970, էջ 460:


<sup>20</sup> ՄՄ Հմր 7099, 165թ:

<sup>21</sup> Թ. Խ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 396-397:

<sup>22</sup> Ձեռագիրը գործածվել է Մովսես Խորենացու «Պատմության» 1913 թ. և Արիստակես Լաստիվերցու «Պատմության» 1963 թ. բնագրերի կազմության լնբացքում, տե՛ս Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տվյլիս, 1913. նմանահանութիւն. Լրացումները Ա. Բ. Մարգսեանի, Երևան, 1991, էջ ֆլ (ձեռ. հ), Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցոյ, աշխատասիրութեամբ՝ Կ. Ն. Յուղբաշյանի, Երևան, 1963, էջ 10-11 (ձեռ. Ը):

<sup>23</sup> Թ. Խ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 392-393:

<sup>24</sup> Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենագարանի, հ. Ա., կազմ.՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, ներածությունը՝ Օ. Եգանյանի, խմբ.՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, 1965, էջ 1027:



Նկ. 1. Նոտրգրի նմուշ, ՄՄ Հմբ 3502, 353ա

գրիշը հայտնում է իր անունը. «Գրեցաւ ի թուականիս Հայոց հազար հարիւր եւ եօթն (1658), ձեռամք յոգնամեղ եւ սուտանուն Գրիգորի»<sup>25</sup>: Իսկ վերջնամասում գետեղված չափածո հիշատակարանից տեղեկանում ենք, որ մատյանը ստացել է Մատաթիա վարդապետը.

«Ծախիւք ստացող տենչմամբ սրտին,  
Մատաթիեայ նօթճող (իմա՞ հյուառդ, հնարող – ի. Հ.) բանին»<sup>26</sup>:  
Նույն հիշատակարանի հաջորդող տողերում ի հայտ է գալիս նաև Աստվածատուր «միայնակեց»-ի անունը, որի մասին նշված է հետևյալը. «Իմ ըստ մարմնոյ նիւթոյ առթին՝ / Աստուածատուր միայնակեցին»: Ուշագրավ է նախադասության սկզբնամասը «Իմ ըստ մարմնոյ նիւթոյ առթին»: Դատելով այս կառուցյաց՝ կարելի է ենթադրել, որ Աստվածատուր միայնակյացը եղել է ստացող Մատաթիայի արյունակից ազգականը: Հիշատակարանի սույն հատվածին հաջորդում է արդեն հոգեսոր ծնողի և ուսուցչի՝ Հակոբ տելետ (իմա՞ իմաստուն, խիստ բանիմաց – ի. Հ.): Աստապատցու հիշատակումը. «Եւ ըստ հոգւոյ դաստիարակին, / աստուածապէս յանձնանձողին, / բարեհամբաւ սըրբահոգին՝ / Յակոբ տէլէտն յԱստապատցին»:<sup>27</sup>

մատյանը սկզբից մինչև վերջ գրված է միւսնուն ձեռքով և նույն նոտրգրով, այսինքն՝ գործ ունենք մեկ գրչի հետ: Զեռագրի տարբեր հատվածներում՝ ցանկերում, գլխավոր հիշատակարանում, նույն գրից կիրառել է մանր նոտրգրի՝ տարբերակելով այդ հատվածները բուն բնագրից (նկ. 1), իսկ միավորների խորագրերը դարձյալ նույն նպատակով գրել է մանր բոլորգրով:

Նույն ձեռագրի 220ա էջի համառոտ հիշատակարանում

<sup>25</sup> ՄՄ Հմբ 3502, 220ա:

<sup>26</sup> Նույն տեղում, 443ա:

<sup>27</sup> Նույն տեղում, 443թ:

Այսպիսով, պարզվում է, որ մատյանն ընդօրինակել է Գրիգոր Երևանցին, ստացողն է Մատաթիա վարդապետը, որի անունից էլ գրիշը շարադրել է հիշատակարանը, իսկ Աստվածատուր միայնակյացը ստացողի արյունակից ազգականն է:

## 2. Գրիգոր Երևանցու ձեռագրաստեղծ գործունեությունը


### 2.1. Ձեռագրակերտման ընթացքը

Գրչից մեզ հայտնի ձեռագրերի ժամանակագրական տվյալների համադրմամբ կարելի է ասել, որ Գրիգոր Երևանցին գրչությամբ է զբաղվել ԺԷ. դարի երկրորդ կեսին՝ ընդհանուր առմամբ շուրջ չորս տասնամյակ։ Մեր պրատումների արդյունքում հնարավոր եղավ պարզել Գրիգոր Երևանցու գրչին մասնակի կամ ամբողջությամբ պատկանող 29 ձեռագիր, թեև համոզված ենք, որ այս թիվը գրչի ձեռագրական վաստակի մի մասն է և չի արտացոլում նրա ընդօրինակությունների ամբողջական պատկերը։ Աղյուսակ 2-ում – նշանով են ընդգծված այն տարիները, որոնցից մեզ որևէ ձեռագիր հայտնի չէ։ Եվ սա այն պարագայում, երբ նույն աղյուսակը ցուց է տալիս, որ առանձին տարիներից մեզ է հասել գրչի երկուական ընդօրինակություն, ինչպես օրինակ՝ ՄՄ Հ<sup>մ</sup> 7004 և Հ<sup>մ</sup> 679 ձեռագրերը՝ ընդօրինակված 1660 թ., ՄՄ Հ<sup>մ</sup> 444 և Վենետիկի Մխիթարյան միաբանության ձեռագրական հավաքածուի (այսուհետ՝ Վնտկ) Հ<sup>մ</sup> 686/1699 ձեռագրերը՝ ընդօրինակված 1681 թ.: Ավելին, առանձնանշելի են 1695 թ. ընդօրինակված մեծագիր երկու Հայսմավուրքները։ Դրանցից առաջինը 575 թերթից բաղկացած ՄՄ Հ<sup>մ</sup> 1532 ձեռագիրն է, որն ունի  $41,5 \times 28$  մեծություն և երկայուն գրություն։ Գրված է բոլորգրով, տողերի քանակը՝ 36<sup>28</sup>։ Երկրորդ Հայսմավուրքը 613 թերթից բաղկացած ՄՄ Հ<sup>մ</sup> 1534 ձեռագիրն է  $40,5 \times 28$  մեծությամբ, կրկին ընդօրինակված բոլորգրով և երկայուն գրությամբ։ Տողերի քանակը՝ 36-38<sup>29</sup>:

Երկու մատյանների թերթերի քանակը միասին կազմում է 1188, եթե նշալ Հայսմավուրքները Գրիգոր Երևանցին իրապես սկսել և ավարտել է նույն 1695 թ., ապա նշանակում է, որ մեկ տարվա կամ 365 օրերի ընթացքում յուրաքանչյուր օր նա ընդօրինակել է միշտնում 3 թերթից մի փոքր ավելի (մինչև 3,5 թերթ)։ Այս ցուցանիշը բավական տպավորիչ է, եթե հաշվի առնենք, որ թերթերը մեծագիր են և ունեն 36-38 տող։ Համեմատության համար նշենք, որ նույն ժամանակահատվածում գործած մեկ այլ արդյունաշատ գրիչ՝ Բարդամ գրչի որդի Միքայելը, որն ի դեպ համագործակցել է Գրիգոր Երևանցու հետ (տե՛ս 2.2), օրական

<sup>28</sup> Մայր ցուցակ, հ. Ե., էջ 367-374:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 383-398:

Նկ. 2. Բոլորգրի նմուշ, ՄՄ Հմ<sup>ր</sup> 1532, 20ա

միջինում ընդօրինակել է 3,5-4 թերթ<sup>30</sup>, այն էլ հիմնականում միջին շափի ձեռագրերի պարագայում: Համանման արդյունքներ ունեն նաև այլ գրիչներ<sup>31</sup>: Կարելի է ասել, որ այսպիսի ցուցանիշով Գրիգոր Երևանցին ոչ միայն ժամանակի բեղմնավոր, այլև արագագիր ու արհեստավարժ գրիչներից է եղել, և միանգամայն արդարացված է նրան տրված «վարպետ» պատվանունը, որը տեսնում ենք ՄՄ Հմ<sup>ր</sup> 1532 Հայսմավուրբի 327ա էջի ազատ մնացած հատվածում՝ գրված այլ ձեռքով. «Ի թուին ՌՃՇԴ. (1695), ի քաղաքն Էջմիածին, որ Վաղարշապատ վերածանուի պատվար Գրիգորի Երևանցւոյ»<sup>32</sup>:


Այս տվյալներն են ահա մեզ հիմք տալիս ենթադրելու, որ ձեռագրերի ներկա քանակն իսկապես արհեստավարժ գրչի գործումներության մասնակի պատկերն է: Ուստի շենք բացառում, որ առաջիկայում ևս ի հայտ կդան գրչի այլ ընդօրինակություններ:

Գրիգոր Երևանցու ձեռագրաստեղծ գործումներության համատեքստում ուշադրության է արժանի նաև վերջինիս գրչարվեստի հնագրական կողմը, մասնավորապես՝ տառատեսակների գործածությունը: Ինչպես երևում է գրչի ընդօրինակություններից, նա հավասարապես տիրապետել և ըստ հարկի կիրառել է բոլորգիրն ու նոտրգիրը, գլխագրային հատվածներում նա հմտորեն գործածել է նաև երկաթագիրը (տե՛ս նկ. 1 և 2), իսկ ՄՄ Հմ<sup>ր</sup> 435 ձեռագրի տարբեր էջերին կարելի է նկատել նաև հետաքրքիր ու ինքնատիպ գրչախաղեր (նկ. 3): Այս վերջինը հատկապես ընդգծում է, որ մատյանների ընդօրինակումն ամենակին էլ մեխանիկական գործ չի եղել գրչի համար, և նա իրապես բավականություն է ստացել իր աշխատանքից:

<sup>30</sup> Խ. Հարությունյան, Միքայել անվամբ Ժէ. դարի երկու գրիչ Երևան, 2016, էջ 127, 156:

<sup>31</sup> Զեռագրերի ընդօրինակման տևողության մասին տե՛ս նաև Խ. Ս. Հարությունյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, Երևան, 2019, էջ 221-225:

<sup>32</sup> Մայր ցուցակ, հ. Ե., էջ 374:

Նկ. 3. Գրչափաղեր, ՄՄ Հմ<sup>ր</sup> 435, 126ա

Առանձնանշելի է նաև, որ մեր քննած մատյաններում բավական քիչ են սրբագրական բնույթի նշումները, ջնջումները կամ ուղղումները, որ խոսում է գրչի ուշիմության և ընդօրինակման գործում ցուցաբերած լրջության մասին:

Նկատենք, որ թեև ընդօրինակվող մատյանների էջաշափերով պայմանավորված տառաշափերը պարբերաբար փոփոխվել են, սակայն հիմնականում դրանք աշքի են ընկնում իրենց համաշափությամբ և կոկիկությամբ: Վայելշագրությունը ևս բնորոշ է եղել գրչին. այդ հատկապես երեսում է խորագրային հատվածներում: Այսպիսով՝ հանձին Գրիգոր Երևանցու, արդարեւ, գործ ունենք վարպետ գրչի հետ, որն իր գրչարվեստով աշխատել և գումար է վաստակել, ինչպես ժամանակի արհեստավարժ այլ գրիչներ:

Երկու ձեռագրերի հիշատակարաններից տեղեկանում ենք, որ Գրիգոր գրիշն ունեցել է օգնական՝ Խուստամխանքեկ անունով: Վերջինս առաջին անգամ նշվում է 1679 թ. ընդօրինակված ժամագրքի (ՄՄ Հմ<sup>ր</sup> 509) հիշատակարանում. «Յիշեսշիք ի մաքրափայլ աղօթս ձեր զյոգնամեղ Գրիգոր գրիշ եւ զսպասաւորն իմ՝ զփոքրիկ Խուստամխանքէկն, եւ դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ»<sup>33</sup>: Երկու տարի անց՝ 1681 թ. էջմիածնում գրչագրված Խորհրդատեարի հիշատակարանում կրկին և վերշին անգամ հանդիպում ենք նույն օգնականի անվանը. «Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս ըզոգնամեղ Գրիգոր գրիշ եւ զծնօղսն իմ եւ զսպասաւորն իմ՝ զփոքրիկ Խուստամխանքէկն, եւ դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն»<sup>34</sup>: Գրչի հետագա ձեռագրերում, նույնիսկ Հայսմավուրքների ընդարձակ և անձնանուններով հարուստ հիշատակարաններում այլևս նշված չէ Խուստամխանքեկի անունը: Թե մինչև երբ է նա սպասվորել Գրիգոր գրչին, հայտնի չէ:

<sup>33</sup> Մայր ցուցակ, հ. Բ, էջ 1056:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 718:

## 2.2. Գրիգոր Երևանցին՝ ծաղկող

Քննովթյան է արժանի նաև Երևանցու ընդօրինակած ձեռագրերի ծաղկման հարցը, արդյո՞ք Երևանցի գրիշը նաև ծաղկող է եղել: Միանգամից պետք է ասել, որ, առանձին բացառովիթուններով, գրչից մեզ հայտնի ձեռագրերը հիմնականում համեստ, բայց նրբաճաշակ նկարագարդումներ ունեն: Կարծում ենք, որ սա ինչ-որ առումով բնական է: Աղյուսակ 1-ից Երևում է, որ գրչի ընդօրինակությունները բովանդակությամբ առավել շափով զանազան ծիսական մատյաններ և ժողովածումներ են՝ Խորհրդատետր, Սաղմոսարան, Տոնացուց, Ժամագիրք և տարաբնույթ ժողովածումներ, որոնք հայկական ձեռագրարվեստում հիմնականում աջի շեն ընկնում հարուստ նկարագարդումներով և երփներանգ մանրանկարներով: Գրիգոր գրչի մատյանների ուշադիր քննովթյունը ցուց է տալիս, որ դրանցում ակնհայտ ընդհանրություններ ունեն կիսախորանների, ճակատագարդերի, զարդատառերի (հիմնականում՝ հանգուցագիր և թոշնագիր, երբեմն՝ կենդանագիր), բուսական լուսանցագարդերի կերտման եղանակներն ու գծագրությունը (նկ. 4 և 5): Հստ որում՝ մանրանկարչական այս տարրերի համար շատ հաճախ գործածվել է նաև միևնույն ներկապնակը՝ կապույտ, կարմիր, երբեմն էլ դեղին ու կանաչ գույներով և դրանց երանգներով: Զարդատառերը գործածված են բացառապես գլխագրերում, և շատ հաճախ նույն ներկով են գրվել նաև համապատասխան միավորների խորագրերը:

Վերը նշվածը հուշում է, որ մատյանների մեծ մասի համեստ և պարզ ծաղկումն իրականացրել է միևնույն անձը, որը, մեր կարծիքով, Գրիգոր Երևանցին է: Նկատենք, որ գրիչն իր հիշատակարաններում հարկ չի համարել առանձին ընդգծել այդ՝ ըստ ամենայնի դա համարելով իր աշխատանքի բնական ընթացքի մի մասը: Այս Երևույթը, որ նկատել է հայերեն ձեռագրերի քաջագիտակ Արտաշես Մաթևոսյանը<sup>35</sup>, բնորոշ է միջնադարի բազմաթիվ հայ գրիչների, և ավանդույթի ուժով շարունակվել է նաև հետագա դարերում: Ընդսմին՝ դիպուկ է Գրիգոր Երևանցուն ժամանակակից և վերը հիշված գրիչ Ավետիս Երեցի օրինակը, որը նույնպես իր զարդարած ձեռագրերի հիշատակարաններում պատեհ չի համարել արձանագրել այդ փաստը<sup>36</sup>: Շուրջ երեք տասնյակ ձեռագիր ընդօրինակած և դրանք համեստորեն ծաղկած բազմարդյուն գրիչ Միքայել Թոխաթեցին ևս իր ձեռագրերի հիշատակարաններում լուռմ է ծաղկման մասին<sup>37</sup>:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ Գրիգոր Երևանցին ոչ միայն գրիչ էր, այլև ծաղկող, սակայն ոչ մանրանկարիչ: Սա լավագույնս Երևում է մի Հայսմավուրքի առիթով: 1698 թ. Գրիգոր գրիշը նահապետ Ա. Եղեսացի կաթողիկոսի (1691-

<sup>35</sup> Ա. Մաքսուսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնապյուր, էջ 61:

<sup>36</sup> Ա. Հարությունյան, «Ավետիս Երեց Երևանցի գրչի ձեռագրական ժառանգությունը», էջ 338:

<sup>37</sup> Խ. Հարությունյան, Միքայել անվամբ մի. դարի երկու գրիչ, էջ 31-34:

1705) պատվերով ընդօրինակել և զարդարապերով ու բուական լուսանցազարդերով ծաղկել է ներկայիս Եղմ. Հմ<sup>ր</sup> 1918 Հայսմավուրքը, որը նկարազարդելու նպատակով ուղարկվել է Եվգոլիխա՛ Բարդամ գրչի որդի Միքայելին: Վերջինս իր հերթին ծաղկումն ավարտել է 1700 թ.՝ դժգոհելով, որ իրեն շտապեցրել և խանգարել են կաթողիկոսի նշանակած վերակացումները. «Վերակացուքն, զոր նա կարգեաց, / Ոչ հոգ տարեալ յամեն դիմաց», — գրել է Միքայել գրիշը<sup>38</sup>: Ավելորդ է նույնիսկ նշել, որ Եթե Գրիգոր Երևանցին ունենար մանրանկարչական անհրաժեշտ հմտություններ, ապա կարիք չէր առաջանա իր իսկ ընդօրինակած մատյանը պատկերազարդման նպատակով այդքան հեռու առաքելու:

ՄՄ Հմ<sup>ր</sup> 1512 Հայսմավուրքը, որը Գրիգոր գրիչն ընդօրինակել է էջմիածնում և նորագավթում 1687-1689 թթ. ընթացքում, նույնպես ծաղկված է և հարուստ է լուսանցային մանրանկարներով, որոնք այս անգամ էլ վրձնել է Մովսես Երեցը: Այդ մասին կա ծաղկողի հիշատակարանը. «Մ վ Տիրամայր թագուհի, / մաղթեմ առ քեզ արտասուալի / Մովսէս էրէց՝ ծաղկող սորի (այսպես – Խ. Հ.)»<sup>39</sup>: Արվեստաբան Ա. Գևորգյանը հավանական է համարում, որ սույն Մովսեսն է նաև ՄՄ Հմ<sup>ր</sup> 2397 ձեռագրի ծաղկողը<sup>40</sup>:

Գրիգոր Երևանցու ծաղկման արվեստի մասին մեր խոսքն ավարտենք Երկու ճշումով.

ա. Եղմ. Հմ<sup>ր</sup> 2268 Խորհրդատետրը, որն ընդօրինակել է Երևանցի գրիշը, 1688 թ. ձեռք է բերել Երուսաղեմի հայոց ապագա պատրիարք<sup>41</sup> Մինաս Ամդեցին (մանրամասն տե՛ս 2.4-ում): Ինչպես տեղեկանում ենք նկարագրությունից և դրան կից հրատարակված Երկու մանրանկարներից, Խորհրդատետրը նկարազարդ է և ունի այլ մանրանկարներ ևս, որոնք աչքի են ընկնում իրենց բավական հետաքրքիր և գեղեցիկ ոճով: Նորայր արքեպոս. Պողարյանը, նկատի ունենալով, որ ծաղկողի անուն նշված չէ, ենթադրել է, որ ծաղկողը կարող է լինել նույն գրիշը. «Գրիշ և ծաղկող՝ Գրիգոր Երևանցի»<sup>42</sup>: Մինչդեռ վերը տեսանք, որ Գրիգոր գրիշը մանրանկարիչ չէր և այդ նպատակով երբեմն համագործակցել է մանրանկարիչների հետ: Ըստ այսմ՝ նշյալ ձեռագրի մանրանկարների հեղինակն անհայտ է մնում:

բ. 1695 թ. Գրիգոր գրչի ընդօրինակած ՄՄ Հմ<sup>ր</sup> 1534 մեծադիր Հայսմավուրքն ունի համեստ նկարազարդումներ, որոնք սահմանափակվում են կիսախորաններով, ճակատազարդերով, թոշնագիր զարդարապերով և բուական

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 208-217:

<sup>39</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե., էջ 161:

<sup>40</sup> Ա. Գևորգյան, Հայ մանրանկարիչներ. Մատենագիտութիւն, IX-XIX դդ., Գանիրէ, 1998, էջ 448:

<sup>41</sup> Ամդեցին պատրիարք է ձեռնադրվել 1698 թ., առև Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղէմի, աշխատափրեց Մ. Եպս. Աղաւանոսի, Երուսաղէմ, 1929, էջ 286-287:

<sup>42</sup> Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ե., կազմեց՝ Ն. արքեպոս. Պողարեան, Երուսաղէմ, 1974, էջ 362:

լուսանցագարդերով։ Ուշադիր լինելու դեպքում կարելի է նկատել ընդհանրություններ Երևանցու այլ գրչագրերում հանդիպող նմանօրինակ զարդանկարների հետ։ Սակայն ավելի խոսուն է նույն՝ 1695 թ. գրչագրված ՄՄ Հմ<sup>ր</sup> 1532 Հայումավուրբի զարդանկարների հետ համեմատությունը, որը հաստատում է դրանց միևնույն գրչին՝ տվյալ դեպքում Գրիգոր Երևանցուն պատկանելը։ Նկատենք, որ Երկու մատյանների պատվիրատուն էլ Նահապետ Ա. Եղեսացի կաթողիկոսն է։ Մատենադարանի Մայր ցուցակի ե. հատորում ձեռագրի նկարագրության մեջ ԾԱՂԿՈՂ հարցի դիմաց հարցականով գրված է. «Յովանէս»<sup>43</sup>: Կասկածի համար հիմք է հանդիսացել ձեռագրի 274ա երեսին պատկերված կիսախորանի մեջ գրված «Յիսուս Քրիստոսի ծառայ տէր Յովհաննէսին» գրությունը։ Ձիշտ է, ծաղկողները սովորություն են ունեցել անուններն արձանագրել իրենց հորինած պատկերների տարբեր հատվածներում, այդ թվում՝ խորաններում, կիսախորաններում և այլն<sup>44</sup>, սակայն մեր խորին համոզմամբ՝ կիսախորանի մեջ նշված Հովհաննէսը ոչ թե ծաղկողն է, այլ Հովհաննէս վարդապետը, որին Նահապետ կաթողիկոսը նվիրաբերել է սույն Հայսմավուրբը։ Այդ մասին տեղեկանում ենք նույն ձեռագրի հիշատակարանից. «Եւ հանձնեաց զսա ի ձեռն սիրելի եւ հարազատ հոգեւոր որդւոյն իւրոյ՝ Յովհաննէս վարդապետին, որ էր նա յերկրէն Ծաղկունեաց ձորոյ, ի գեղջէն Ըոլընդալամայ...»<sup>45</sup>: Ուստի՝ ձեռագրացուցակում նշված «Յովհաննէս»-ը ուղղելի է Գրիգոր Երևանցի։

### 2.3. Գրչության վայրերը

Գրիգոր Երևանցուց մեզ հայտնի 29 ձեռագրերի հիշատակարանների զգալի մասում բացակայում են գրչավայրերի մասին նշումներ (տե՛ս Աղյուսակ 1), իսկ մնացյալ ընդօրինակություններում որպես գրչավայր հիշատակվում են Երևանը, Նորագավիթը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը։ Ընդ որում՝ ամենից շատ թվով ձեռագրեր նա ընդօրինակել է Էջմիածնում։ Այդ պատճառով Երևանցու ձեռագրերի համառոտ կամ ընդարձակ նկարագրություններում երբեմն վերականգնումով կամ հարցականով առկա է Էջմիածին նշումը՝ որպես ընդօրինակման հավանական վայր, ինչպես՝ ՄՄ Հմ<sup>ր</sup> 1864<sup>46</sup>, 10032<sup>47</sup>, 8636<sup>48</sup> ձեռագրերի պարագայում։

Մեր ուշադրությունը գրավեց ֆրանսիայի ազգային գրադարանում (այսուհետ՝ ֆԱԳ) պահպող՝ Գրիգոր Երևանցու 1659 թ. ընդօրինակած ժողովածուի

<sup>43</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե., էջ 383:

<sup>44</sup> Խ. Ա. Հարությունյան, Հայերէն ձեռագրերի հիշատակարանները, էջ 135:

<sup>45</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե., էջ 396:

<sup>46</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Զ. (ձեռագիրք 1801-2100), իմբագրութեամբ՝ Գ. Տէր-Վարդաննեանի, Երևան, 2012, էջ 233:

<sup>47</sup> Յուցակ ձեռագրաց, հ. Բ., էջ 1033:

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 785:

նկարագրությունը (Հմ<sup>ր</sup> 335), որում գրչովիան հավանական վայրեր են դիտվել Երևանը կամ Թիֆլիսը<sup>49</sup>: Գրիգոր գրիշն իսկապես ձեռագրեր է ընդօրինակել Երևանում, հատկապես գործունեության սկզբնական տարիներին (ՄՄ Հմ<sup>ր</sup> 3502, Վնտկ Հմ<sup>ր</sup> 1533/1019), և արդարացիորեն կարող է համարվել Երևանյան գրօցախի գործիշ ուստի՝ հավանական է Երևանը նշալ մատյանի գրչավայր դիտելը, մանավանդ որ գրչից մեզ հայտնի վաղագուն ձեռագիրը (ՄՄ Հմ<sup>ր</sup> 3502) ստեղծվել է Երևանում 1658-1663 թթ.: Մինչդեռ պարզ չէր Թիֆլիսի նշումը: Մեր պրապումները ցուց տվեցին, որ սույն շփոթը գալիս է դեռևս Մաշտոցյան Մատենադարանի Յուցակ ձեռագրաց-ի Ա. հատորից, որի անձնանունների ցանկում Գրիգոր Երևանցու անվան դիմաց գրված է. «Գրիգոր Երևանցի, 1660-1692 թթ., գրիշ յէջմիածին, ի Նորագաւիթ եւ ի Տփիսիս»<sup>50</sup>: Ստուգելով անվան դիմաց նշված ձեռագրերը, պարզեցինք, որ Հմ<sup>ր</sup> 2032-ը Թիֆլիսում ընդօրինակել է ոչ թե Գրիգոր Երևանցին, այլ նույն ժամանակահատվածում գործած, ծագումով Երևանցի նույնանուն մեկ այլ գրիշ՝ Գրիգոր դպիրը: Շփոթն առաջացել է այն պատճառով, որ գրիշը ներկայանում է որպես Գրիգոր դպիր Երևանցի: Նշալ ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Արդ, գրեցաւ Տօնացոյց եւ Աւետարանացոյց ի թուականութեանս Հայոց Խճ՛ֆԴ. (1665), ի քաղաքն Տըպդիզոյ, ընդ հովանեաւ Սուրբ Բէդղահէմին, ի վայելումն... եւ ինձ՝ փծուն եւ ախմար գրչի՝ Գրիգոր դպրի յԵրեւանցի»<sup>51</sup>:

Առնվազն Երկու հանգամանք մեզ թույլ չեն տալիս նույնացնելու այս Երկու գրիշներին. առաջին և ամենակարևոր գործոնն այն է, որ Գրիգոր Երևանցու որևէ հիշատակարանում գրչանվանը կից չի հանդիպում դպիր բառը, մինչդեռ վերոբերյալ օրինակում այն կա: Ավելին, մեզ հայտնի ուրիշ ոչ մի ձեռագրի հիշատակարանում Գրիգոր Երևանցու անվանը կից գրվող ինքնախարազանող բառերի մեջ ո՛չ առանձին և ո՛չ էլ միասնաբար չեն հանդիպում փծուն կամ ախմար բառերը: Ամենից տարածվածը «զոգնամեղ»-ն է, մի դեպքում էլ գործածված է «անարժան» բառը (ՖԱԿ, Հմ<sup>ր</sup> 335): Որոշ տարբերություններ կան նաև տառերի գրության մեջ, այսինքն՝ հնագրական տեսանկյունից ևս դժվար է նրանց նույնացումը:

Փորձեցինք պարզել նաև՝ արդյոք մեզ հայտնի՝ են սույն Գրիգոր դպրից այլ ձեռագրեր: Բայտ ամենայնի՝ նույն Գրիգոր դպիրն է 1643 թ. ընդօրինակված ՄՄ Հմ<sup>ր</sup> 333 Ավետարանի գրիշը: Հիշատակարանում կրկին նշված է Թիֆլիսի Սուրբ

<sup>49</sup> R. H. Kévorkian, A. Ter-Stépanian, *Manuscrits arméniens de la Bibliothèque nationale de France*, p. 947.

<sup>50</sup> Յուցակ ձեռագրաց, հ. Ա., էջ 1479:

<sup>51</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Զ., էջ 1124:

Բեթղեհեմ Եկեղեցին, որի հովանու ներքո նա գրշագրել է մատյանը. «Աւարտեցաւ սուրբ Աւետարանս ի քաղաքն Տպիսիզ, ի դուռն Բեթխայշհեմայ Աստուածածնի, ձեռամբ ոգնամեղ եւ անարժան Գրիգոր դպրի»<sup>52</sup>: Շարունակության մեջ Գրիգորը հիշում է իր վարպետ Մկրտչին, ծնողներին (Աբրիհամ և Սաթխաթուն), եղբորն (Յովանէս) ու քրոջը (Յեղիսափեթ), որոնք տարբեր են Գրիգոր Երևանցու ընտանիքի անդամների անուններից: Այլ խոսքով, գործ ունենք երկու տարբեր, բայց նույնանուն գրիշների հետ:

Երկու գրշագրի՝ ՄՄ Հմ<sup>ր</sup> 435 և 1512 ընդօրինակությունը Գրիգոր Երևանցին սկսել է էջմիածնում և ավարտին հասցրել Նորագավթում: Վերջինը հատկապես մեծարժեք է հիշատակարանում Նորագավթի Եկեղեցիների և տեղի հոգևորականների հիշատակման տեսանկյունից<sup>53</sup>: Եվս 11 ձեռագրում Երևանցի գրիշը, որպես ընդօրինակման վայր, արձանագրել է էջմիածինը: Մնացյալ 13 ձեռագրերի գրչության ստույգ վայրերն անհայտ են: Ըստ ամենայնի՝ գրչության ավարտին դրանք դեռևս գնորդ չեն ունեցել:

Ամփոփենք. Ըստ հիշատակարանային տվյալների՝ Գրիգոր Երևանցի գրիշ ձեռագրաստեղծ գործունեություն է ծավալել Երևանում, Նորագավթում և Սուրբ Էջմիածնում: Սակայն Երևանցու ընդօրինակությունների մի մասում գրչավայրերը նշված չեն, ուստի՝ չի բացառվում, որ նա այս գրչօջախներից դուրս ևս ձեռագրեր ստեղծած լինի:

## 2.4. Ստացողները

Ձեռագրերի ստեղծման գործում անուրանալի է պատվիրատու-ստացողների դերը: Որպես կանոն՝ հենց վերջիններիս անմիջական մեկնասությամբ, թելադրանքով, հնարավորություններով և ճաշակով են հաճախ կերտվել մատյանները: Ձեռագրաստեղծման գործընթացում ստացողների դերի և նշանակության մասին առիթ ունեցել ենք ավելի մանրամասն խոսելու<sup>54</sup>, սակայն առանձին գրչի մատենագրական ժառանգության քննության համատեքստում ևս կարևոր է նրա ընդօրինակությունների պատվիրատու-ստացողների մասին պատկերացումը

<sup>52</sup> Նույն տեղում, էջ 80: Նկատենք, որ ՄՄ Հմ<sup>ր</sup> 333 և 2032 գրչագրերում զգալի տարբերություն կա տառածեների միջև. 1643 թ. ընդօրինակված Ավետարանում տառերն անհմուտ են գծված, սովորականից խոշոր ու անհամաշափ, թվում է գործ ունենո՞ւ նորագարժ գրչի հետ, մինչդեռ 1665 թ. ընդօրինակված ՄՄ Հմ<sup>ր</sup> 2032 ձեռագրում արդեն տեսնում ենք արհետավարժ գրչին բնորոշ գիր: Ըստ ամենայնի՝ Ավետարանը Գրիգոր դպրի առաջին ընդօրինակություններից է, ուր նա հիշում է նաև իր վարպետ Մկրտչին: Հավանաբար, հետագայում գրիշը կատարելագործել է իր գրչարվեստը, որի լավ օրինակ է Հմ<sup>ր</sup> 2032-ը:

<sup>53</sup> Ա. Հարությունյան, «Նորագավթի բնակավայրը և Սուրբ Գևորգ եկեղեցու վիմագրերը», ՊԲՀ № 2, 2017, էջ 143-144:

<sup>54</sup> Խ. Ա. Հարությունյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, էջ 141-158:

կազմելը: Դա հնարավորություն է տալիս ճշտել գրչին առնչվող մի շարք հարցեր՝ վերջինիս ճանաշվածությունը, հասարակական տարբերի հետ համագործակցումը և այլն: Այլ խոպակ՝ որևէ գրչի վարպետության և հեղինակության կարևոր ցուցիչներից պետք է համարել նաև պատվիրատուններին:

Բացառություն չէ նաև Գրիգոր Երևանցին, որը մատյաններ է ընդօրինակել հասարակ մարդկանց, տարաստիճան հոգևորականների, մինչև անգամ կաթողիկոսների պատվերներով: Մասնավորապես, նա ձեռագրեր է ընդօրինակել Եղիազար Ա. Այնթապցի (1682-1691) և Նահապետ Ա. Եղեսացի (1691-1705) Ամենայն Հայոց կաթողիկոսների համար, նրա ևս մեկ մատյան ձեռք է բերել Երուսաղեմի հայոց պատրիարք Մինաս Ամդեցին:

1686 թ. «Ընդ հովանեաւ Սրբոյ եւ մեծի էջմիածնի եւ մասն ինչ ի գիւղաքաղաքն նորագաւթայ» Գրիգոր Երևանցու ընդօրինակած և ներկայումս ՄՄ Հ<sup>Յ</sup>ր 435 Ատենի ժամագրքի ստացողն է Ամենայն Հայոց կաթողիկոս Եղիազար Ա. Այնթապցին: Մատյանի հիշատակարանում գրիշը կաթողիկոսին Սուրբ Հոգուց ստացած պարգև է համարում հայոց համար՝ գրելով. «Արքանուէր եւ հոգիընկալ հայրապետս մեր Եղիազար կաթողիկոս, որ ի վերջացեալ ժամանակիս եւ ի յետին դարուս ընծայեցաւ ազգիս Հայոց, որպէս թէ պարգեւք ի Հոգւոյն Սրբոյ»<sup>55</sup>: Կաթողիկոսի մասին գեղեցիկ ու ճոխ տողեր շարադրելուց հետո Գրիգոր Երևանցին թվարկում է նաև Եղիազար Այնթապցու նորոգչական և շինարարական աշխատանքներն էջմիածնում, որոնք հիշատակարանը վերածում են մի իսկական վավերագրի՝ ԺԷ. դարավերջին Մայր Աթոռի եկեղեցիների և վանքապատկան տարածքների նորոգումների մասին<sup>56</sup>:

Առավել արգասաքեր է Նահապետ Ա. Եղեսացու և Գրիգոր գրչի համագործակցությունը, որը ծնունդ է տվել առնվազն Երեք նշանակալի ձեռագրերի: Խոպքը Երեք մեծադիր Հայսմավուրքների մասին է, որոնցից Երկուսն այսօր պահպում են Մաշտոցյան Մատենադարանում (ՄՄ Հ<sup>Յ</sup>ր 1532, 1534), իսկ մեկը՝ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության ձեռագրատանը (Եղմ. Հ<sup>Յ</sup>ր 1918): Առաջին Երկուսն, ինչպես վերը տեսանք, ստեղծվել են միևնույն 1695 թ., իսկ Երրորդը՝ 1698 թ.: Պատվիրատուի կրկնության հանգամանքը, այն էլ կաթողիկոսի, ինքնին խոսում է գրչի նկատմամբ առկա մեծ վստահության և նրա աշխատանքի գնահատման օգտին: Դեռ ավելին, 1698 թ. Հայսմավուրքը, որը նախատեսված է Եղել Երուսաղեմ ուղարկելու համար, և այդ նպատակով հոգ է տարվել գտնելու ժամանակի շնորհաշատ մի մանրանկարչի՝ անգամ էջմիածնի և նրա շրջակաքից էլ դուրս, ընդօրինակման գործը կրկին վստահվել է Գրիգոր Երևանցուն: Երուսաղեմյան և ՄՄ Հ<sup>Յ</sup>ր 1534 ձեռագրի հիշատակարաններն ունեն

<sup>55</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ., էջ 657:

<sup>56</sup> Այս մասին տե՛ս հոդվածի Բ. մասում:

նաև զգալի ընդհանրություններ մասնավորապես նահապետ կաթողիկոսի շինարարական գործունեության ներկայացման տեսանկյունից, որոնք, ինչ խոսք, աղբյուրագիտական մեծ արժեք ունեն:

Եղմ. Հմբ 2268 Խորհրդատերը ևս ընդօրինակել է Գրիգոր Երևանցին: 1688թ. մատյանը ձեռք է բերել Եւդոկիայի թեմի առաջնորդ, իսկ 1698 թ.-ից Երուաշղեմի հայոց պատրիարք Մինաս Ամդեցին: Այդ մասին տեղեկանում ենք Ամդեցու թողած հիշատակարանից, «յիշեսչիք զիս՝ զմեղօք վիրաւորեալ հոգի զՄինաս վարդապետս պիտակ անուն Յամթեցի, որ ըստացայ զսա ի վայելումն ինձ»<sup>57</sup>: Հետաքրքիր է հատկապես գրչի և պատրիարքի այս առնչությունը: Յավոք, մեզ չհաջողվեց պարզել, թե ինչպես է Ամդեցին ձեռք բերել մատյանը, արդյո՞ք անձամբ է ճանաչել գրչին և պատվիրել, թե՞ մի այլ եղանակով: Նկատի ունենալով Ամդեցու հայտնի գրասիրությունը և տարբեր գրիչների հետ նրա համագործակցությունը<sup>58</sup> գուցե թե կարելի է ենթադրել, որ Գրիգոր Երևանցուն էլ ձեռագիր պատվիրած լինի, սակայն այս տարբերակը քիչ հավանական է, քանի որ Գրիգոր գրչի հիշատակարանը սեղմ է ու անհասցե («Ընդ հովանեաւ Սրբոյ Աթոռոյս էջմիածնի գծագրեցաւ ձեռամբ յոգնամեղ Գրիգորի Երևանցւոյ»<sup>59</sup>), ինչպես բոլոր այն դեպքերում, երբ մատյանը դեռևս ստացող չի ունեցել: Այլպես որևէ պատճառ չենք տեսնում ստացողին, այն էլ Ամդեցու նման, անվանապես չհիշատակելու: Ըստ ամենայնի՝ Ամդեցին նշյալ Խորհրդատերը ձեռք է բերել Մայր Աթոռ կատարած իր այցելություններից մեկի ընթացքում<sup>60</sup>: Իմիշիայլոց, նկատենք մի ուշագրավ փաստ, որով Մ. Ամդեցու և Գրիգոր Երևանցու ուղիները միջնորդավորված կերպով խաչվում են: Վերը տեսանք, որ Եղմ. Հմբ 1918 Հայամավուրքն ընդօրինակել է Գրիգոր գրիչը, իսկ նկարազարդումն իրավործել է Բարդամ գրչի որդի Միքայելը, որն իր ձեռագրաստեղծ գործունեության ընթացքում ամենաշատ թվով ձեռագրեր ընդօրինակել կամ ծաղկել է հենց Մինաս Ամդեցու պատվերով<sup>61</sup>:

Գրիգոր Երևանցու ընդօրինակած մատյանների ստացողների շարքում են նաև այլ հոգևորականներ՝ Մատաթիա, Հովհան Շամբեցի և Մովսես վարդապետները, Երեմիա և Մարգարե քահանաները, Ներսես րաբունին, Հովհասափ աբեղա-

<sup>57</sup> Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. է., էջ 362-363:

<sup>58</sup> Կարապետ Ամատունին կազմել է մի ցուցակ՝ բաղկացած մոտ երեք տասնյակ ձեռագրերից, որոնք պատվիրել և ստացել է Մ. Ամդեցին տարբեր գրիշ-ծաղկողներից, տե՛ս Կ. Եազս. Ամատունի, Մինաս վրդ. Ամդեցի՝ պատրիարք Երուասղէմի (1630-1704 նոյմբ. 24), Վիեննա, 1984, էջ 34-47:

<sup>59</sup> Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. է., էջ 363:

<sup>60</sup> Մ. Ամդեցու էջմիածնական այցելությունների մասին մի քանի վկայություններ է հիշատակում Վիեննայի Միքայելաց հայր Ներսես Ակինյանը, տե՛ս Հ. Ն. Ակինյան, «Մինաս Ամդեցի, պատրիարք հայոց Երուասղէմի (ծն. ից 1630-†1704)», ՀԱ, 1960 (7-9), էջ 321-60:

<sup>61</sup> Խ. Յարութիմեան, «Մինաս Ամդեցու մի եղակի դիմանկարի մասին», Սրոն, 2017 (1), էջ 58:

Կարբեցին, աշխարհականներ ջաքարիան, պարոն Ռոկանը և Սոլթանը: Ուշագրավ է հատկապես Երեմիա քահանայի պատվերով ընդօրինակված ՄՄ Հմ<sup>ր</sup> 1512 Հայսմավուրքը, որի հիշատակարանում անվանապես արձանագրված են ստացողի բազմանդամ ընտանիքի անդամներն ու մերձավոր ազգականները:

Ամփոփելով նկատենք, որ Գրիգոր Երևանցուց մեզ հայտնի 29 մատյաններից գրչության ժամանակի ստացողներ ունեն 15-ը: Ըստ այսօն՝ կարելի է ենթադրել, որ գրչության ավարտին մնացյալ մատյանները դեռևս գնորդ չեն ունեցել: Իբրև այս վերջինի վառ օրինակ՝ կարելի է մատնանշել ՄՄ Հմ<sup>ր</sup> 399 ձեռագիրը, որի հիշատակարանը գրչությունից հետո Երևանցի գրիշն անավարտ է թողել և չի լրացրել անհրաժեշտ տեղեկությունները<sup>62</sup>:

Շարունակելի...

### Աղյուսակ 1.

#### Գրիգոր Երևանցու ձեռագրական ժառանգությունը

Ձե՛մ. ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՄԱՐԸ	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ԳՐՉ. ԺՄՆԿ.	ԳՐՉ. ՎԱՅՐԸ	ՍՏԱՑՈՂ(ՆԵՐ)
1. ՄՄ Հմ <sup>ր</sup> 3502	Ժողովածոյ	1658- 1663	Երևան	Մատարիա վրդ.
2. ՖԱԳ, Հմ <sup>ր</sup> 335	Բարոյագիտական ժողովածոյ (Հ. գլուխ)	1659	Երևան	—
3. ՄՄ Հմ <sup>ր</sup> 7004 <sup>63</sup>	Ժողովածոյ	1660	—	—

<sup>62</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ., էջ 352: Պեսֆ է նշել որ ձեռագրի կիսատ բողած հիշատակարանում նշված չէ գրչանունը, սակայն, հատորը կազմողները ճիշտ են նկատել, որ մատյանի գրչությունը նման է ՄՄ Հմ<sup>ր</sup> 444 մատյանի գրչությանը: Մենք կարող ենք հավելել նաև հիշատակարանի կաղապարային սկզբի, միամման բառակապակցությունների առկայությունը, որոնք Գրիգոր Երևանցին գործածել է իր մի շարք գրչագրերի հիշատակարաններում:

<sup>63</sup> Գրիգոր Երևանցին ձեռագրի հիմնական գրիշն է (1ա-96ա, 117ա-311ա), ընդօրինակությունն արված է մանր նոտարգրով, որը մեզ ծանոթ է այլ ձեռագրերից ևս: 311ա երեսին գրչի հիշատակարանն է: «Գրեցաւ ի բուսկամիս հայոց հազար հարիս եւ ինն (1660), ձեռամբ անարժան Գրիգորի Երևանցոյ: Արդ զվայելողադ մաղթեմ, զի զկնի ընթերցման ներոյ յիշման արժանի առնել զիս եւ զծնօղան իմ»: Զեռագրի 100ա-15թ էջերն ընդօրինակել է Մկրտիչ Երեցը: Գրքը բոլորգիր է և տարբերվող Գրիգոր Երևանցու այլ ձեռագրերից մեզ հայտնի բոլորգիր:

4.	ՄՄ Հմr 679 (Ա. ձեռ.)	Ժողովածոյ	1660	—	—
5.	ՄՄ Հմr 3032	Դիոնէսիոսի Արխապագացոյ Մատենագրութիւնն (թրզմ. Ստ. Լեհացի)	1662	—	—
6.	Վճակ. 1533/1019 <sup>64</sup>	Դիոնէսիոս Արխապագացի	1671	Երևան	Ա. Յոհան Վրդ. Շամբեցի
7.	ՄՄ Հմr 10032	Արիստոնէլ, Գիրք Բնագանցականաց (Մետաֆիզիկա, թրզմ. Ստ. Լեհացի)	1675	—	Ներսէս Ռաբունի
8.	ՄՄ Հմr 1864 (Ա. ձեռ.)	Ժողովածոյ	1676	—	—
9.	Ս. Պետերբուրգ, Արևելյան ձեռագրերի ինստ., հայ. ձեռ. Հմr 52 <sup>65</sup>	Տօնացոյց եւ Գանձարան	1677	—	—
10.	Արմաշ, Հմr 13 <sup>66</sup>	Ժողովածոյ	1678	—	—
11.	ՄՄ Հմr 509	Ժողովածոյ	1679	—	Զաքարիա
12.	ՄՄ Հմr 444	Խորհրդատեսր	1681	Էջմիածին	Սօլթան

<sup>64</sup> Գրիգոր Երևանցին մատյանի առաջին գրիչն է: Նոյն ձեռագրի մեկ այլ հիշատակարանում նշված է Մարգար Իհն Աստապատցի անունով ևս մեկ գրիչ: Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Միսիթարեանց ի Վենետիկ, հ. Ը., յօրինեց Տ. Ա. Վրդ. Ճեմճեմեան, Վենետիկ-Ս. Ղազար, էջ 191:

<sup>65</sup> Կ. Հ. Յօզբայան, “Армянские рукописи в петербургских собраниях, каталог”, *Палестинский сборник*, выпуск 104, С.-Петербург, 2005, с. 90-91. Զետագրացուցակում՝ Հմr 165:

<sup>66</sup> Յ. Թօփմեան, Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ-Ս. Ղազար, 1962, էջ 77:

13.	Վճով. Հմր 686/1699	Խորհրդատեսր	1681	Էջմիածին	—
14.	ՄՄ Հմր 1224	Ժողովածոյ	1685	Էջմիածին	—
15.	ՄՄ Հմր 435	Ժամագիրք ատենի	1686	Էջմիածին, Նորագավիթ	Եղիազար կթղկս
16.	Եղմ. Հմր 2292	Մաշտոց ձեռաց	1687	—	—
17.	Եղմ. Հմր 2268	Խորհրդատեսր	1688	Էջմիածին	Մինաս Ամդեցի
18.	ՄՄ Հմր 1512	Յայսմատսր	1687- 1689	Ակիզբը՝ Էջմիածին, ավարտը՝ Նորագավիթ	Երեմիա Ֆիլ
19.	ՄՄ Հմր 1425 <sup>67</sup>	Ժողովածոյ	1689— 1690	Էջմիածին	Հովասափ Կարբեցի (Ա), Հովասափ Վրդ. (Բ. գրիշը)
20.	ՄՄ Հմր 399	Խորհրդատեսր	1689	Էջմիածին	—
21.	ՄՄ Հմր 445	Խորհրդատեսր	1690	Էջմիածին	Մարգարէ Ֆիլ
22.	ՄՄ Հմր 450 (Ա. ձեռ.)	Ժողովածոյ	1692	—	—
23.	ՄՄ Հմր 1532	Յայսմատսր	1695	Էջմիածին	Նահապետ Եղեսացի կթղկս
24.	ՄՄ Հմր 1534	Յայսմատսր	1695	Էջմիածին	Նահապետ Եղեսացի կթղկս
25.	Եղմ. Հմր 1918	Յայսմատսր	1698	Էջմիածին, Ժաղկումը՝ Թոնսաթ	Նահապետ Եղեսացի կթղկս
26.	ՄՄ Հմր 10273	Մաշտոց ձեռնադրութեան	1699	Էջմիածին	Մովսէս Վրդ.

<sup>67</sup> Զեռագրի առաջին գրիշն է. ըստ նկարագրութեան՝ լմդօրինակել է 1գ-129թ Էջերը, ան՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Դ., կազմեցին՝ Ա. Քէօշկերեան, Կ. Սուքիանեան, Յ. Քեոսէեան, խմբագրութեամբ՝ Փ. Անթարեանի, Յ. Քեոսէեանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շահէ քնչ. Հայրապետեանի, ցանկերը կազմեց՝ Վ. Գեւրիկեանը, ԵՊՀ հրատ., Երևան, 2008, էջ 1237:

27.	ՄՄ Հմր 1501 <sup>68</sup>	Յայսմատուրք	ԺԷ. դ.	—	Պարոն Ռոկան
28.	Եղմ. Հմր 1094	Գիրք հոգեաց եւ հրեշտակաց. Թովմա Ազոփինացի (Թրզմ. Ստ. Լեհացի)	ԺԷ. դ.	—	—
29.	ՄՄ Հմր 8636	Զաբարիա Քանաթեոցի, Կոնդակ Յովիաննավանից <sup>69</sup> , Վասն Գէորգայ զօրավարին	ԺԷ. դ. (1687 թ. — ից հետո)	Եջմիածին	—

Աղյուսակ 2

## Գրիգոր Երևանցու ձեռագրաստեղծությունները\*

1658	1 åbn.	1670	—	1683	—	1696	—
1659	1 åbn.	1671	1 åbn.	1684	—	1697	—
1660	2 åbn.	1672	—	1685	1 åbn.	1698	1 åbn.
1661	—	1673	—	1686	2 åbn.	1699	1 åbn.
1662	1 åbn.	1674	—	1687	1 åbn.		
1663	—	1675	1 åbn.	1688	1 åbn.		
1664	—	1676	1 åbn.	1689	2 åbn.		

<sup>68</sup> Մատյանի որոշ էջեր լրացրել է գրիչ Պօղոս կրոնավորը, տե՛ս Մայր ցուցակ՝ հայերէն ձեռագրաց Մայտողի անուան Մատենադարանի, հ. Ե., էջ 9:

<sup>69</sup> «Կոնդակ»-ը նշալ ձեռագրի հիման վրա հրատարակվել է 1870 թ., առև Զաբարեայ Սարկաւագի պատմագրութիւն, հ. Գ., ի տպ. Մրբյ կարողիկէ էջմիածնի ի Վաղարշապատ, 1870: Ձեռագիրը գործածված է նաև վերջեւու տպագրված բնագրում. Զաբարիա Քանաքեցի, Պատմութիւն, Կոնդակ սուրբ ուխտին Յօհաննու վանից, աշխատափրությամբ Ա. Վիրաբյանի, խմբագրությամբ Ա. Մադայանի, Երևան, 2015, է 31-32 (ձեռ. Ե):

1665	—	1677	1 ձեռ.	1690	2 ձեռ.		
1666	—	1678	1 ձեռ.	1691	—		
1667	—	1679	1 ձեռ.	1692	1 ձեռ.		
1668	—	1680	—	1693	—		
1669	—	1681	2 ձեռ.	1694	—		
1679	—	1682	—	1695	2 ձեռ.		

\* Գրիգոր Երևանցու գրչին պատկանող Երեք ձեռագրերի հիշատակարաններում գրչության թվական չկա:

## KHACHIK HARUTYUNYAN

### GRIGOR YEREVANTS‘I, A PROLIFIC SCRIBE FROM THE SECOND HALF OF THE 17<sup>th</sup> CENTURY

#### 1. The Scribe and His Manuscript Heritage

**Keywords:** Yerevan, Etchmiadzin, Noragavit‘, manuscript, colophon, scriptorium, recipient, commissioner.

Our study of the scriptoria in Yerevan and its environments has revealed the name of a prolific scribe from the second half of the 17<sup>th</sup> century, who has copied about three dozens of manuscripts in Yerevan, Noragavit‘ and Etchmiadzin. In his colophons, he always signed as Grigor Yerevants‘i, and thanks to these scribal notes and colophons, we have been able to find out some information about the scribe and his family as well, which has helped us in the study of several manuscripts.

On the basis of the paleographic features of the manuscripts and by a linguistic and stylistic analysis of their colophons, we have identified 29 manuscripts completely or partially copied by scribe Grigor. Among his commissioners were representatives of various social groups and clergy, including two Armenian Catholicos, Eghiazar I Aynt‘apts‘i (1682–1691) and Nahapet I Edesats‘i (1691–1705).

A list of the scribe’s manuscripts is presented in a separate table at the end of

this article (see Table 1). Most of the manuscripts (20) are kept at Matenadaran, four are in the library of the Armenian Patriarchate of Jerusalem, two are in the collection of the Mekhitarist Fathers in Venice, one is in the National Library of France and one, at the Institute of Oriental Manuscripts in St. Petersburg. The current location of one manuscript is unknown (it was registered in the catalogue of the Armash monastery).

To be continued.

## ХАЧИК АРУТЮНЯН

### ГРИГОР ЕРЕВАНЦИ, ПЛОДОВИТЫЙ ПИСЕЦ ВТОРОЙ ПОЛОВИНЫ XVII ВЕКА

#### 1. Писец и его рукописное наследие

**Ключевые слова:** Ереван, Эчмиадзин, Норагавит, рукопись, колофон, скрипторий, заказчик, получатель.

Изучение скриптория Еревана и его окрестностей выявило имя плодовитого писца второй половины 17-го века, скопировавшего около трех десятков рукописей в Ереване, Норагавите и Эчмиадзине. В своих колофонах он всегда подписывался как Григор Ереванци. В этих записях и колофонах содержатся некоторые данные о писце и его семье, что помогло в изучении нескольких рукописей.

На основе палеографических особенностей рукописей и лингвистического анализа их колофонов было определено 29 рукописей, полностью или частично скопированных писцом Григором. В число его заказчиков входили представители различных социальных групп и духовенства, в том числе два армянских католикоса – Егиазар I Айнатапци (1682-1691) и Наапет I Эдесаци (1691-1705).

Список рукописей писца представлен отдельной таблицей в конце статьи (см. Таблицу 1). Подавляющее большинство хранится в ереванском Матенадаране (20 рукописей), 4 рукописи находятся в Армянском Патриархате Иерусалима, две другие – в собрании отцов Мхатаристов в Венеции, другие – в Национальной библиотеке Франции (1 рук.), в Институте восточных рукописей Санкт-Петербурга (1 рук.). Настоящее местонахождение одной рукописи неизвестно (она была зарегистрирована в каталоге рукописей монастыря Армаш).

Продолжение следует.